

Հաստատված է
ԵՄԽՀ-ի գիտական խորհրդի
„_____” 20 թ, նիստ _N____
Գիտխորհրդի նախագահ՝ Ա.Ս.Աղաբաբյան
„_____” 20 թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՄԽՀ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 ԵՄԽՀ-ի կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատման հարցման կանոնակարգը սահմանում է ԵՄԽՀ-ի պրակտիկանտների շրջանում հարցման անցկացման, արդյունքերի մշակման և օգտագործման կարգը:
- 1.2 Հարցումն անց է կացվում «Կրթության մասին » ՀՀ օրենքի , ԵՄԽՀ կանոնադրության, որակի ապահովման հայեցակարգի, համալսարանում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգի և ներքին շահակիցների կողմից ուսուցման որակի ապահովման գործառույթներին մասնակցելու և պրակտիկայի արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:
- 1.3 Հարցումը պրակտիկայի գործընթացի բարելավման կարևորագույն բաղադրիչն է, որի անցկացման նպատակն է ստանալ տեղեկատվություն համալսարանի պրակտիկանտների տեսական գիտելիքների և ժամանակակից մեթոդների տիրապետման, պրակտիկայի գործընթացի կազմակերպման, տևողության, վայրի, պրակտիկայի ղեկավարի աշխատանքների վերաբերյալ:

2. Հարցման անցկացումը

- 2.1 Հարցումն անց է կացվում համալսարանի պրակտիկանտների շրջանում:
- 2.2 Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա ապրիլ-մայիս ամիսներին:

- 2.3 Հարցումն անցկացվում է համալսարանի մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի կողմից:
- 2.4 Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից ներկայացվող գնահատման հարցաթերթով:
- 2.5 Հարցումն անանուն է և անց է կացվում թղթային եղանակով:

3. Հարցման արդյունքի մշակումը և պահպանումը

- 3.1 Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում և պահպանվում են մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնում:
- 3.2 Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր պատասխանի գնահատման համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով, միջին քառակուսային շեղումով և ստացած յուրաքանչյուր գնահատականի քանակով:
- 3.3 Հարցաթերթիկներն ունեն կարծիքների և առաջարկությունների բաժիններ, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են ուսումնառության բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:
- 3.4 Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկ ամսվա ընթացքում:
- 3.5 Հարցաթերթիկներում ջնջումները և ուղղումները չեն հաշվարկվում:
- 3.6 Գնահատված հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են 5 տարի:

4. Հարցման արդյունքների օգտագործումը

- 4.1 Հարցման վերլուծությունը մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի ղեկավարման բաժնի վարիչը քննարկում է որակի կառավարման հանձնաժողովի, ուսումնամեթոդական բաժնի, մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի հետ:
- 4.2 Ուսումնամեթոդական բաժինը հարցման արդյունքների վերլուծությունների հիման վրա ֆակուլտետների ղեկանների, ամբիոնների վարիչների հետ

քննարկում և մշակում է պրակտիկայի գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

4.3 Ֆակուլտետների ղեկանները մեկամսյան ժամկետում առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակում են ֆակուլտետում բարելավման գործողությունների ծրագիր և ներկայացնում են ֆակուլտետի խորհրդի հաստատմանը, որտեղ նշվում են ծրագրի միջոցառումների իրականացման ժամկետներն ու պատասխանատուները:

4.4 Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում համալսարանի պաշտոնական կայք էջում:

5. Կարգի հաստատումը և նրանում փոփոխությունների և լրացումների կատարումը

5.1 Սույն կանոնակարգը հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը:

5.2 Կանոնակարգում լրացումներ կամ փոփոխություններ կարող են կատարել.

5.2.1 համալսարանի ռեկտորը

5.2.2 գիտական խորհրդի անդամները

5.2.3 որակի կառավարման հանձնաժողովը գիտական խորհրդի որոշմամբ և հաստատմամբ:

ԵՄԽՀ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

Հարգելի՛ ուսանողներ,

Համալսարանը կարևորում է ձեր կարծիքը և վստահեցնում, որ ձեր անկեղծ և օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու համալսարանի կողմից կազմակերպվող պրակտիկան: Հարցումն անանուն է, ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով: Խնդրվում է լրացնել հարցաթերթիկը և հարցերը գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ ամենաբարձր գնահատականը 5-ն է, իսկ ամենացածրը՝ 3-ը:

(Ֆակուլտետ)

(մասնագիտություն)

(ուսուցման ձևը)

N	Գնահատեք պրակտիկայի արդյունքները	գնահատականը
1	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի կազմակերպման գործընթացը	
2	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի անցկացման վայրը	
3	Որքանո՞վ է Ձեզ բավարարում պրակտիկայի տևողությունը	
4	Որքանո՞վ է պրակտիկայի ծրագիրն իրականացվում	
5	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկա ընդունող կազմակերպման աջակցությունը պրակտիկայի ընթացքում	
6	Որքանո՞վ Ձեր տեսական գիտելիքները բավարարեցին ակտիվ պրակտիկայի ընթացքում	
7	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը	
8	Որքանո՞վ էր ուսումնասության ընթացքում յուրացրած մեթոդները նպաստում պրակտիկայի անցկացմանը	
9	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց նոր մեթոդների յուրացմանը	
10	Գնահատեք պրակտիկայի վայրի կողմից նշանակված ղեկավարի աշխատանքները	
11	Որքանո՞վ էր պրակտիկայի ղեկավարը վստահում Ձեզ	
12	Գնահատեք պրակտիկայի ընթացքում Ձեր կողմից ձեռքբերած նոր հմտությունների և կարողությունների աստիճանը	
13	Որքանո՞վ արդարացան Ձեր ակնկալիքները պրակտիկայից	
14	Ի՞նչ առաջարկություններ ունեք պրակտիկայի գործընթացի կազմակերպման վերաբերյալ	